




2. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

Ա

«ԳԻՐԸ ԾՆՆԴՈՅ»

1. ԲՅՈՒՋԱՆԴԻՈՆԻ ՀԻՆ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Դժվար բան է կազմել հայ գաղութներու գիրք ծննդոցը: Անոր համար նախ, որ մեզ աղբյուրներ կապակսին գտնելու համար առաջին հայերու հետքը զանազան գաղութներու մեջ: Եվ հետո, մինչև այսօր ալ պարզ չէ մեզմեջ շատերուն համար, թե ի՞նչ պետք է հասկնալ գաղութ ըսելով: Գաղութ պետք է հաշվել, օրինակ, հայերու որևէ համախմբություն օտար երկրի մը տակ: Կթվի, թե հաճախ չափազանցության կերթանք գաղութ անունը տալով զանազան երկիրներու մեջ մարմին առած մեծ թե փոքր առհասարակ բոլոր հայ կորիզներուն: Սխալ պիտի ըլլար զանոնք բոլորն ալ գաղութ համարել, քանի պատմության չեն ներկայանար անոնք արդեն կազմված իբր համայնք, առավել կամ նվազ հայ դիմագծությամբ: Նման համայնքներ հին օրերուն կրնային սակայն ստեղծվիլ առավելապես եկեղեցիներու շուրջ: Մեզի ծանոթ հայ գաղութներու ամբողջ շրջանին Եկեղեցին էր, որ միակ կապը կամար ցիրուցան հայության միջև, հայ դիմագիծ տալով զանազան ափերու վրա գոյություն առնող այդ համայնքներուն, ու անոնց մեջ դիմացնելով

հայրենի ավանդությունները, սովորությունները, ինչպես և լեզուն: Եկեղեցին կապ կապահեր ու կամուրջ կդառնար գաղութի գաղութ:

Ճիշտ է, որ աշխարհի քարտեզին վրա շատ հաճախ կազմված են հայ բջիջներ, որոնց պակասած է հայ աղոթատեղին, ինչպես էին, օրինակ, հալածանքներ փախելով օտար երկիրներ ապաստանող հայ բազմությունները, որոնք համախումբ ապրած են ի սկզբան ու պահպանած են որոշ ատեն իրենց հայ դիմագիծը, կամ այն առևտրական կայանները, զորս ստեղծած են հայ վաճառականները աշխարհի զանազան կեդրոններուն մեջ, իրենց հոգեկան կապերը առանց խզելու մայր ժողովուրդին հետ, և փորձելով կյանք ստեղծել և իրենց շուրջը: Բայց անոնցմե ոչ մեկը չեն երկար: Ոմանք խառնվեցան շուտով տեղական ժողովուրդներուն, ձուլվեցան, հատան: Ուրիշներ կայան փոխեցին, ցրվեցան, տարրալուծվելու համար իրենց կարգին բնիկ տարրին մեջ: Տոկացին միայն անոնք, որոնք հնարավորություն ունեցան իրենց հոգին կապված պահելու մայր զանգվածին հետ, ու դիմացնել իրենց ավանդությունները: Ու Հայ Եկեղեցին էր, որ մեծ դեր կատարեց այդտեղ:

Պոլիս մեկն էր այն հայ գաղութներեն, որոնք կրցան դիմանալ:

Պոլիս գաղութ մը չէր, բառին սովորական իմաստովը: Գաղութ չէր այն հասկացողությամբ միայն, որ հայ զանգված մըն էր հայ-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի Մ Մ Թ-ից և ԺԲ-ից:

րենի-երկրեն հեռու: Այսպես, ան գաղութն ա-
վելի բան մըն էր, տեսակ մը հայ աշխարհ
հայ հողեն հեռու, որ բազկերակը պիտի դառ-
նար պահ մը հայ կյանքին, երբ ամեն ինչ
խամբեր հայ հողին վրա: Խճանկար մը պիտի
դառնար պահ մը ան, ուր պիտի գային բոլոր
հայ գավառները իրենց բարձրը բերել, իրենց
ավանդությունները, հետքեր իրենց ընտանե-
կան սովորություններեն, իրենց բարբառեն:
Վոսփորի ամիսներուն վրա Հայաստանի մը
մանրանկարը պիտի ստեղծվեր, ուր անընդ-
հատ ավելի պիտի հոսեր գավառեն և որ միշտ
պիտի աղավաղվեր ու պիտի թարմանար:

Պոլիսը պիտի չկրնար սակայն կատարել
դերը, զոր իրապես կատարեց, եթե ան մայ-
րաքաղաքը ըլլար թուրքին: Գավառի համար
Պոլիսը պիտի դառնար տեսակ մը ապավեն,
ուր պիտի խուժեին բոլոր կարիքները դար-
ման գտնելու հույսով, բոլոր ցավերը, բոլոր
հույսերը: Պանդուխտներով պիտի լեցվէին
Պոլսո խաները, ու հայ տառապանքը պիտի
գար ցուցադրվեր եկեղեցիներու բակին մեջ:
Գավառը Պոլիս պիտի խուժեր, որպեսզի
բախտ ալ փորձեր, ու դիրք չինք իրեն տա-
կավ: Պոլիս այս կերպով մայրաքաղաք դար-
ձավ հայուն ալ. հայը ինքն ալ ունեցավ հոն
իր ավագանին՝ իր ամիրաները, որոնք
կոթնած մեյմեկ փաշայի, իրենց կարգին ի-
րենք ալ մեյմեկ արքունիք ստեղծեցին ու
արքանյակներու իրենց բանակը, որ կտեւեր
որքան ամիրան, իսկ ամիրան կտեւեր որքան
կտեւեր իր փաշան:

Պոլիս սակայն իր կատարած այդ դերը
առավելապես կպարտի Պատրիարքական Ա-
թոռին, զոր պարագաները ստեղծեցին հոն:
Այդ Աթոռը կապը պիտի հանդիսանար պե-
տության և հայ հպատակներուն միջև, և ամ-
բողջ հինգ դար իրեն պիտի կապեր հայ ժո-
ղովուրդի բախտը: Ան պիտի դառնար ոչ
միայն հոգևոր կեդրոնը օսմանյան կայսրու-
թյան բոլոր հայերուն, այլև պիտի փորձեր
վարել նաև հայ ժողովուրդի ճակատագիրը:

Պոլիս իր բախտը կարևոր չափով մը պար-
տական է նաև դիրքին, զոր կցրավեր ցամաք-
ներու և ծովերու հանդիպման զմայլելի այդ
կետին վրա: Երբոր ցամաքեցան առևտրական
բոլոր մյուս ճանապարհները, որոնք Արևելքը
կկապեին Արևմուտքին և փոխադարձաբար,
Պոլիս հանդիսացավ առևտուրի մեծագույն
կայանը հսկա կայսրության մը համար, և իր
ծոցը համախմբեց ինչպես առևտրի մարդի-
կը, նույնպես և բոլոր անոնք, որոնք իրենց
բախտը փորձելու ասպարեզ կփնտռեին: Այդ-
պես էր որ հայ առևտրականներու ևս ցանց
մը պիտի կազմվեր Պոլսո մեջ, մեծատուն-
ներու ասրողջ պաշտնա մը, որ իր կարգին
տակավ ծնունդ պիտի տար քաղքենիներու
դասի մը, որ, Ասիայեն բխած, Եվրոպայեն

շապիկ պիտի փոխ առներ, մինչ քանի մը քալ
անդին բովանդակ գավառ մը պիտի հեծեր
թշվառության մեջ:

Եվ սակայն նույն այդ Պոլիսը, իր բիծերուն
ու մեղքերուն հակառակ, հայ կյանքի մեջ բա-
ցառիկ դեր կատարեց ամբողջ հինգ դար: Ի
հեճուկս կոիվներուն, որոնք խաղաղ չձգեցին
երբեք Պատրիարքական Աթոռը, դավանական
վեճերուն, որոնք սեղուցին այդ հինգ դարերու
պատմության շատ մը էջերը, ի հեճուկս նաև
ամիրաններուն, աղաներուն և էֆենդիներուն,
որոնք փոխնիփոխ իրենց ամբարտապանու-
թյունը փռեցին Հայ Եկեղեցւո բակին մեջ,
Պոլիսը միշտ ունեցավ նաև խալ մը, որ տեր
մնաց հայ ավանդություններուն, նույնացավ
հայ ժողովուրդի հուզումներուն հետ, ու փոր-
ձեց զարթոնքի այն մեծ ճիգը, որ պիտի գար
հորիզոն բանալ հայուն, բարձունք ստեղծել
հայ մշակույթի բոլոր մարդերուն վրա, հայ
դատին ի սպաս դնել քանի մը սերունդ:

Պետք է որ այդ Պոլիսը մոռցվի:

Պոլսո հայ կյանքին հինգ դարերուն զննու-
թյան անցնելիս առաջ, անհրաժեշտ էր կանգ
առնել պահ մը Պոլսո հայ գաղութին ծագման
վրա. նյութ, որ մինչև օրս ալ դժբախտաբար
չէ լուսաբանված լրիվ, չնայելով, որ առանց
այդ սկզբնական շրջանի պարզաբանության,
անկարելի էր ըմբռնել կյանքը գաղութի մը,
որ ամբողջ կես հազարամյակ հայ ժողովուր-
դի հոգևոր և ազգային կեդրոնն է հանդիսա-
ցեր, խանձարուրն է եղեր արևմտահայ աշ-
խարհաբարին և գրականության:

Մտադրեալ Օրմանյան անգամ, որ, իբրև
Պոլսո նախկին պատրիարք, պետք էր շատ
մանրակրկիտ ուսումնասիրած ըլլար Պոլսո
հայ գաղութին և մասնավորաբար Պոլսո Հայ
Պատրիարքության ստեղծման պարագաները,
մասնավանդ ինչ կվերաբերի Ֆաթիհ Սուլթանի
և անոր հաջորդներուն կողմից Հայոց Պատրի-
արքության տրված առանձնաշնորհումնե-
րուն, դժբախտաբար շատ հարևանցի և շփոթ
է այդ դեպքերուն նվիրված իր հատվածներուն
մեջ և ինչ որ կուտայ այդ առթիվ, պարզապես
քաղ մըն է հին աղբյուրներու, որոնք չեն
ճշգրտված սակայն վավերագրերու լույսին
տակ: Այնպես որ պատկառելի իր երկր՝ «Ազ-
գաստառում»-ը, ուր հայ պատմության այն-
քան շրջաններ և ասոնց հետ կապված այնքան
դեպքեր մանրակրկիտ ուսումնասիրության
առարկա են եղած, ոչինչ նոր բան կըսե Պոլսո
հայ գաղութի ծագման մասին:

Հրանտ Ասատուր ևս իր «Կ. Պոլսո հայերը
և իրենց պատրիարքները»¹ խտացած աշխա-
տության մեջ դժբախտաբար շատ հարևանցի
կանցնի այս հարցին վրայեն: Ավելի շատ

¹ «Ենդարձակ օրացույց Ս. Փրկչյան ազգային հի-
վանդանոցի», Կ. Պոլիս, 1901, էջ 77—288:

հապճեպ նոթեր են ինչ որ կարճանագրե հոն, տեսակ մը կմախք, որ թվական և անուն կուտա լիառատ, բայց չի խոսեցներ դեպքերը, կմախք, որ բավական չէ մարդոց ու անոնց գործունեության հետեւելու համար, երբ մանավանդ, գրի առնված և տպված համիդյան գրաբնության պայմաններուն տակ, ցատկած է բազմաթիվ «անհաճո» դեպքերու վրային ու կանգ առած անցյալ դարու կեսերուն, ուրիշ սկսող դեպքերը կրնային ավելի ևս անհաճո դառնալ:

Պոլսո գաղութին ծագման հարցը ուրիշ շատերն ալ դրադեցուցած է անշուշտ, առանց սակայն լիովին պարզաբանված ըլլալու: Երջան մըն է հայոց պատմութեան մեջ, որուն մասին մեզ հասած աղբյուրները ժլատ և միևնույն ատեն շփոթ են: Հայ աղբյուրները գրեթե լռելիք, բացի ինչ-ինչ ձեռագրերու հիշատակարաններէն, իսկ ցարդ հայտնված օտար աղբյուրները լեցուն են հակասութիւններով և ավելի ևս կշիռնեցնեն:

Բարձր կաթողիկոս, որ հաճախ զբաղած է ինքն ալ Պոլսո հայ գաղութին անցյալով, շատ իրավունք ուներ ըսելու. «Ստուգիվ որոշ կերպով չենք գիտեր, թե հայերը առաջին անգամ ե՞րբ հաստատվեցան Կ. Պոլսո մեջ: (ինդիքը զանգվածային գաղթի վրա է անշուշտ: Վասնզի, սկիզբին ր վեր հայ ուսանողներ զտնված են Կ. Պոլսո մեջ, ինչպես նաև հայ իշխաններ և զինվորականներ՝ արքունիքին հետ իրենց ունեցած հարաբերութեանց պատճառով): Այս մասին ինչ տեղեկութիւն որ կա մեր ազգային պատմութեան մեջ, շատ հին թվականներու չի վերաբերիր: Ասկե զատ ճոխ ու մանրամասն չեն այդ տեղեկութիւնները և հայ գաղթականութեան պատմութիւնը կդառնա ժ դարուն շուրջը»²:

Առաջին խնդիրը ուրեմն, զոր անհրաժեշտ է ճշտել, հայ տարրին հնութեան պարագան է Պոլսո մեջ: Անհրաժեշտ է, որովհետև առանց ճշտելու սկզբնական կորիզը, անկարելի է ըմբռնել դերը փտակներուն, որոնք անընդհատ հոսեցան այնտեղ, ամեն մեկը նոր ալիշ մը բերելով, ամեն մեկը հետք մը ձգելով:

Ընդհանրապես Պոլսո հայ գաղութին ծագումը ցարդ կկայային Յաթիհ Սուլթան Մեհմեդի կողմէ Պոլսո գրավման հետ: Ոչինչ ավելի անհիմն բան այս ենթադրութիւնը, որ մեզ կզրկեր Յաթիհի կողմէ հաւոց ընծայված դիրքը լմբռնելու հնարավորութենէն և հետագային Պոլսո գաղութին դերը կրացատրեր բացառապես օսմանյան բարեհաճութեամբ: Սլոմ բոլոր տվյալները կան հայ զանգված փնտելու և գտնելու օսմանցիներէն ալ առաջ:

Հայեր վաղուց է կային Բյուզանդիոնի մեջ, հաճախ նաև հոծ թվով: Ու շատ բնական էր այդ: Կայսրութիւն մը, որուն հետ շփում ունեցած էին հայերը անոր հիմնադրութեան օրերէն սկսյալ և ուր, զանազան շրջաններու, բացառիկ ալ դեր էին կատարած, չէր կրնար հայեր համախմբած ըլլալ իր մայրաքաղաքին մեջ: Այնպես որ Բյուզանդիոն շատ կանուխէն ճանչցած է հայը, սկսյալ այն օրերէն, երբ Հռոմ Արեւելքի մեջ իր դերը փոխանցեց Բյուզանդիոնին, այս փերջինն էր, որ ժառանգեց անոր հավակնութիւնները ևս Հայաստանի վրա, ինչպես որ Սասանյանները հաջորդելով Պարթևներուն, անոնց դերը պիտի ստանձնէին հայ ժողովուրդի ճակատագրին մեջ: Հռոմեական-պարթևական մրցակցութեան տեղ հայ հողին վրա, մարմին պիտի առնէր բյուզանդա-պարսկականը, մանավանդ 384-են հետո, երբ հայ ժողովուրդի երկու անհաշտ հարկանները իրենց միջև պիտի բաժնէին Հայաստանը:

Այդ օրէն կսկսեր հայ ժողովուրդի դարավոր կապը Բյուզանդիոնի հետ:

Բազմաթիվ էին կապերը, զորս հայ ժողովուրդը ունեցավ Բյուզանդիոնի հետ: Ետ հետունքը կտանէր անոնց մանրամասնումը: Պետք է ըսել միայն, որ քաղաքական և զինվորական հարաբերութեանց կողքին, զորս Բյուզանդիոն բնականաբար պիտի ունենար շրջանի մը հետ, որուն վրա կտարածեր իր ազդեցութիւնը, հայերն ու հույները մշակութային կապեր ունեցան դարեր շարունակ, առանց հիշելու երկու ժողովուրդներու հարաբերութիւնները կրոնական և դավանական գետնի վրա, որոնք նույնպես դարեր տեւեցին:

Բայց արդոյք Բյուզանդիոնի մեջ մնալուն գաղութ ունե՞ր հայ ժողովուրդը: Դժվար է այդ հարցին դրական պատասխան տալ, մանավանդ ինչ կվերաբերի հարաբերութեանց սկզբնական շրջանին, եթե գաղութ չսեպնէր ուսանողներու հոծ թիւը, զոր Ե դարէն սկսյալ հայերը ունեին Բյուզանդիոնի մեջ, ինչպես ռենին, թեև ավելի նվազ թվով, մտավոր ուրիշ կեդրոններու մեջ ևս:

Պարագան կփոխվի, երբ կհասնինք այն դարերուն, երբ հայերը իրենք սկսան դեր ունենալ Բյուզանդիոնի կյանքին մեջ, զործոն մասնակցութիւն բերելով կայսրութեան քաղաքական և զինվորական կյանքին:

Արդարեւ մայրաքաղաքի մը մեջ, ուր հայ ծագումով տասնյակ մը կայսրեր բազմեցան ու շատ մը կայսրուհիներ, և որուն բանակներուն մեջ հայեր բացառիկ դիրք ու դեր ունեցան դարերով, անշուշտ որ պիտի ունենար մնալուն հայ բնակչութիւն մը իր պատերէն ներս: Կարկառուն այդ դեմքերուն հետ, որոնք կուգային դեր ստանձնել կայսրութեան ճակա-

² Բարգենե Եպիսկոպոս, «Կ. Պոլսո հայ գաղութին ծագումը և հնագույն եկեղեցիները», «Էնդարձակ տարացույց», Կ. Պոլիս, 1926, էջ 291:

տագրին մեջ, անհնար էր, որ Վոսփորի ակիբ-րուն վրա չգային զետեղվիլ իրենց մոտավոր ու հեռավոր ազգականները, ինչպես և ազգակիցներու առավել կամ նվազ հոծ թիվ մը, ի հարկին կռվան դառնալու համար իրենց:

Շրջան մը եղավ սակայն, երբ հայու հետքը չքացավ կարծես Բյուզանդիոնէն: Այդ այն շրջանն էր, երբ հայերը իրենց քաղաքական ու զինվորական ազդեցությունը այլևս չունեին բյուզանդական կայսրության մեջ: Տրամաբանական է ենթադրել, որ այդ շրջանին հայերը ոչ կարիք ոչ ալ հնարավորություն ունեին կայսրության մայրաքաղաքին մեջ համախմբվելու, մանավանդ երբ այդ շրջանը կզուգահեռվար այն դարերուն, ուր Բյուզանդիոն բացասական դեր սկսած էր ստանձնել հայ ժողովուրդի ճակատագրին մեջ, ըլլա իր զգվելի փորձերով Հայ Եկեղեցին քարշ տալու համար Օրթոդոքս Եկեղեցվո հովանիին տակ, ըլլա իր դավերով հայ պետության դեմ:

Եվ սակայն ինչ ալ եղած ըլլա հայերու թիվը հայ և բյուզանդական հարաբերությանց այդ բովանդակ շրջանին, չէր կրնար ուրույն համայնք մը կազմած ըլլալ ան: Բյուզանդիոնի անդիշող ոգին ազգային տարրերու հանդեպ և օրթոդոքս մոլեռանդությունը պիտի չհանդուրժէին, որ հայը ազգային դիմագիծ պահեր կայսրության սահմաններին ներս, կամ ի վիճակի ըլլար իր ծեսը պահպանելու: Բյուզանդիոնի մեջ իսկական հայ գաղութ գտնելու համար պետք է ավելի նոր օրերու գալ: ԺԱ դարու կեսերուն, 1044 մարտ 9-ին, Պոլսո մեջ կհիշատակվի, օրինակ, ժողովրդական հեղափոխություն մը, որուն հետևանքով ազդու միջոցներ ձեռք կառնվին և օտարներ, ինչպես հրեաները, իսլամները և հայերը Պոլսեն դուրս կհանվին³:

«Արդ հայերը օրթոդոքսացած չէին կրնար ըլլալ, քանի որ հրեաներուն և իսլամներուն հետ կհիշվին իբրև օտար կամ ավելի ճիշտ այլակրոններ: Ասիկա նշան մըն էր, թե բյուզանդական կայսրության մայրաքաղաքին մեջ հայերու կարևոր գաղութ մը կարձ»:

Միջայել Ասորի պատմիչը, հիշելով հայոց գաղթերը Մեծ Հայքեն, ինչպես նաև Կապադովկիո շրջանեն, նախ Վասիլ Բ կայսեր օրով (976—1025), երբ Սենեքերիմ Արծրունին անոր զիջեցավ իր երկիրը, և հետո Միջայել Դ կայսեր (1034—1041) ժամանակ, երբ բյուզանդացիք արաբներու ձեռքեն քաղաքներ առին Կապադովկիո, Իլիկյան Հայաստանի և Ասորիքի մեջ, կըսեն, թե «Մեծ Հայքեն քաղեցին բերին շատ մը ժողովուրդ, որոնցմե ոմանք հաստատվեցան այս կողմերը և բազմ»:

³ Abbé Albert Vogt, 17, p. 109.

⁴ Աշոկ Ալպոյաճյան, «Պատմություն հայ գաղթականության», Բ, Կահիրե, 1955, էջ 518:

մացան. ոմանք գացին Կոստանդնուպոլսեն անդին. ոմանք ալ Եգիպտոս գացին»⁵:

Բարգեն եպիսկոպոս, ի վեր հանել հետո Միջայել Ասորիի և այլ հետագա տեղեկություն կարևորությունը Պոլսո հայ գաղութի անցյալին մասին, նկատել կուտա, թե անոնք առհասարակ համաձայն են մեր ազգային պատմիչներուն:

Բյուզանդիոնի Ալեքսիս Ա Կոմնենոս (1081—1116) կայսեր օրով Պոլսո հայոց և ասորիոց դեմ մղված հալածանքին մասին խոսելով, Միջայել Ասորի պատմիչը (Անտիոքի պատրիարք 1166—1199) կըրեն. «Այս միջոցին Կ. Պոլսո պատրիարքը (Նիկողայոս Գ, 1064—1111) հրամայեց [Կ. Պոլսեն] արտաքսել մեր (ասորիոց) և հայոց ժողովուրդը, որոնք չէին ընդունել անոնց (հունաց) հերետիկոսությունը (քաղկեդոնականությունը): Եվ որովհետև ան կպնդեին և ասոնք ալ չէին ուզեր ընդունիլ, պատրիարքի հրամանին վրա բերին գրգռելը, Սուրբ Խորհուրդը, և ինչ որ կար Ասորիոց Եկեղեցվույն մեջ և այրեցին հրապարակի վրա: Միևնույն բանը ըրին և հայոց, որոնց Հաղորդությունը և Ս. Մեռոնը թափեցին գետին և ոտնակոխ ըրին»:

Ասորի պատմիչը հիշել հետո, թե ասորիոց և հայոց դեմ Կ. Պոլսո մեջ սկսած այս հալածանքը տարածվեցավ ամբողջ բյուզանդական կայսրության մեջ, կավելցեն, թե «Երբ քրիստոնյայք կհալածվեին թուրքերու կողմեն ավերներով և ավարներով, ներսը շատ ավելի կենդանի քաղկեդոնիկներու կողմեն»:

Իլիկյան շրջանին պահ մը դարձյալ աշխուժացած էին հայոց կապերը Բյուզանդիոնի հետ: Կակնարկենք միաբանական այն փորձերուն, որոնք պահ մը ընդհատված մնալի հետո, վերստին թափ ստացած էին, շփման մեջ դնելով կայսերին ու պատրիարքները Հայոց Կաթողիկոսության հետ:

Եվ սակայն նույնիսկ այդ օրերուն Բյուզանդիոն չէր հրաժարած օտարադավան քրիստոնյաները հալածելու իր քաղաքականությանեն, առաջին հերթին հայերը դարձնելով իր ատելությանց իշավակ:

Արդարև, հայոց դեմ կրոնական ուրիշ հալածանք մը կհիշվի Իսահակ Անգեղոս կայսեր օրով (1185—1195). «Թեև ի վերայ Տունաց թագաւորեաց Փիսիկն Սահակ, և յարոյց հալածանս և չարչարանս հայադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա. վասն որոյ գրէ

⁵ „Chronique de Michel le Syrien, Patriarche Jacobite d'Antioche (1166—1199), Paris, 1905. III. p. 198.

⁶ Բարգեն եպիսկոպոս, հիշված աշխատությունը, էջ 291:

⁷ Chronique de Michel le Syrien, III, p. 166.

առ նա աղերսաւորաբար պատրիարքն Գրիգոր խաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ. և ոչ լուաւ նմա, այլ զլուովս դարձուց ի կրօնս իւր, և զայս հալածական արարա՞ծ:

ԺԲ դարու վերջներուն տեղի ունեցած այդ հալածանքը վերջիններէն եղած ըլլալ կթիվի. «Կոստանդնուպոլսի հայ բնակիչներ ունեցած է Բյուզանդական կայսրութեան առաջին ատեններէն,—կգրե Նրանտ Ասատուր:—Աղոնք հունական ծեսին հետեւելով, իւր առանձին հասարակութիւն չէին նկատուիր: Բայց ԺԲ դարուն Կոստանդնուպոլսու մեջ կային արդեն Հայ եկեղեցւոյ զավակ բազմաթիւ հայեր, որոնք սկսեւ էին իւր առանձին մարմին նկատուիլ, այնպէս որ երբ 1197-ին Սուլթանի պատահեցաւ և հայերը հուլներէն շարաթ մը ետքը տոնեցին Ս. Զատիկը, հուլները, որոնք արդեն կհալածեին հունածան շնորհ հայերը, սկսան նեղել զանոնք և բռնադատել, որ հունաց տոները և ծեսերը ընդունին: Գրիգոր Ապիրատ կաթողիկոսը նույն տարին Պոլսի զրկեց ներսնս Լամբրոնացին, սակայն չկրցաւ այդ կրօնական հալածանքը վերջացնել տալ. շատ հայեր հունածան եղան, և շատեր ալ հարկադրուեցան հեռանալ: Իսկ երբ պալեոլոգները բյուզանդական մայրաքաղաքը 1261-ին վերստին առին լատիններուն ձեռքէն, որոնք գրաված էին զայն 1204-ին, ա'լ չարունակեցին կրօնական հալածանքը հայոց դեմ, և ԺԴ դարուն սկիզբները Կոստանդնուպոլսու մեջ կար արդեն հայ գաղթականութիւն մը, եպիսկոպոս մը ունենալու յալի կարելո՞ւ»:

Լատիններու Կոստանդնուպոլսու կայսրութեան տիրած շրջանին (1204—1261), հայերը խտացան Կոստանդնուպոլսու մեջ, մինչդեռ բյուզանդական կայսրութեան բեկորներուն, ի մասնավորի Նիկիական կայսրութեան մեջ, հայ գաղթիւնները կհետնեին և իրենցմէ աննշան հետքեր միայն կմնային¹⁰:

Վիլլամ դը Ռուհրիգ, որ 1253-ին, այսինքն լատին տիրապետութեան միջոցին Կոստանդնուպոլսի այցելած է, իր ուղեգրութեան մեջ կպատմե, որ հայերու հանդիպած է հոն¹¹:

Երբ պալեոլոգները լատիններուն ձեռքէն Պոլսը առին 1261-ին, բյուզանդական կայսրութիւնը ճարճատիւ սկսած էր արդեն: Անադոլոյի և Ռումելիի շատ մը վայրերը ելած էին իր ձեռքէն, բյուզանդական բանակը իր քաղաքներու ուժ մը կներկայացներ միայն, իսկ ջնհովացիները տուն-տեղ եղած էին Բյուզ-

անդիոնի քթին տակ, Ղալաթիո և Բերայի մեջ: Այնպէս որ վերստին հաստատուելէ հետո Բյուզանդիոնի մեջ, պալեոլոգները այլևս կդարեցնէին հալածանքը և հայերը վերստին կսկսէին ստվարանալ հոն:

Պալեոլոգներու շրջանին հայերու կապը Բյուզանդիոնի հետ նոր թափ կստանար երբոր Միքայել Թ կայսրը (1295—1320) գահակալութենէն տարի մը հետո իրեն կնութեան կառնէր Հեթումի քույրը Ռիթան¹², թեև որեւէ աղբյուրէ մեզ լուսաբանված չէ հայոց դերը այդ պահուն Կոստանդնուպոլսու մեջ:

Պոլսու գրավումը նախորդող քանի մը դարերու ընթացքին հայերը կարծես թե կրկին կաշխուժանան Բյուզանդիոնի մեջ:

Ալպոյաճյան, ակնարկելով շուրս դարերուն, որոնք սկսան սելջուկներու Հայաստան մուտքով և հասան մինչև Պոլսու գրավումը թուրքերուն կողմէ և որոնք ընթացքին հայութեան ստվար թիւ մը դնպի Արևմուտք խուժեց, կըսե, թե հայ գաղթականութիւնը ի սկզբան դնպի բյուզանդական հողերը կխուժէր, բայց հետո կանգ առաւ թափը, երբ «շատ մը հոգամասն, որոնց մեջ հայերը ամենէն շատ խտացած էին, դարեցաւ բյուզանդական ստացվածք ըլլալէ» և «այն պոստիկ տարածութեան մեջ, որ այս շրջանին վերջերը ունէր Բյուզանդիոն, հայերու մեծ թիւ մը կարելի չէր ունենալ»: Հայերու դերը, ըստ Ալպոյաճյանի, անշեացաւ նաև անոր համար, որ մինչ ի սկզբան հայերը կիպլինն առավելապէս զինվորական ասպարեզի վրա, տակաւ զրկեցան ազնվականութեան և պալատական ծառայութեան մեջ: «Երկրին անապահով դրութիւնը և տնտեսական շատ անկայալ կացութիւնը ևս ավելցնելով այս խեղճ վիճակին վրա, պիտի կարենանք լիովին համոզում գոյացնել, թե հայերը ինչպէս նախընթաց շրջաններուն՝ նույնպէս և այս շրջանի սկիզբը, որչափ որ ոգևորութեամբ բյուզանդական երկրներ ապաստանած են, այնքան ալ այս շրջանի վերջերը, անկէ հեռացած և հեռավոր աշխարհներ գաղթած են», մանավանդ երբ հայոց կացութիւնը դժնդակ կդարձնէին կրօնական հալածանքները, «զորս բյուզանդացիք ընդհանուր կերպով կգործադրէին ոչ-քաղկեդոնականներու կամ միաբնակներու դեմ»¹³:

Մոլեռանդութեան ակիբ, որով համակված էր Բյուզանդիոն, կասած էր սակայն կայսրութեան վերջին շրջանին: Ահաւոր վտանգին առջև, զոր կներկայացներ թրքական արշավանքը, Բյուզանդիոն աչքերը ստիպված էր

¹⁰ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 133:

¹¹ «Ընդարձակ օրացույց», Կ. Պոլս, 1901, էջ 77—78:

¹² Արշակ Ալպոյաճյան, հիշված աշխատութիւնը, էջ 526:

¹³ «Հայրենիք ամսագիր», ԺԲ տարի, թիւ 20

¹² Արշակ Ալպոյաճյան, հիշված աշխատութիւնը, էջ 528:

¹³ Անդ, էջ 523:

Արևմուտք հասել: Բյուզանդիոնի կայսեր և հունաց պատերազմի համակերպությունը Եվգինիոս Դ պապին միաբանական փորձերում՝ առավելապես Կաթոլիկ եկեղեցվո և անոր միջոցով կաթոլիկ Եվրոպային աջակցությունը ապահովելու սիրույն էր թրջական վտանգին առջև: Նման միջոցորոտի մը մեջ բնականաբար հայ գաղութ մը հին օրերու շկամության նշավակ պիտի չըլլար այլևս Բյուզանդիոնի պատերեն ներս, և հետևապես հայ գաղութ մը պիտի գտներ հոն Ֆաթիհ, երբ բռնի բանար քաղաքին դռները:

2. ՀԱՅՐ ԶԵՆՈՎԱԿԱՆ ԱՓԻ ՎՐԱ

Պոլսո հին հայ գաղութին մասին խոսած ատեն, շենք կրնար մոռնալ նաև այն հայ կորիզը, որ գոյություն ունեցած է Բյուզանդիոնի հանդիպակաց ափին Ֆաթիհեն առաջ:

Այդ հայ կորիզը կգտնվեր Ղալաթիա կամ Գալաթա թաղին մեջ, որ ամբողջ երկու դար ջենովացիներու իշխանության ներքև էր նախքան Ֆաթիհը:

Լեոն Քերական, Արևելքի կայսրերուն նվիրած իր պատմության մեջ, զոր հորինեց շուրջ 1013-ին, կհիշե արդեն Գալաթա ամրոցը Ոսկեղյուրի հանդիպակաց եզերքին վրա:

Գալաթան կհիշե նաև Իբն-Բատթա արաբ աշխարհագիրը ԺԲ դարուն:

Բյուզանդական կայսրության իսկ օրով, Բյուզանդիոնի հանդիպակաց այդ եզերքին վրա, հոն, ուր ջենովացիները բույն դրած էին, տակավ սկսած էր հաստունալ հայ տարր մը: Քեֆեի կամ Կաֆայի (Քեոդոսիա) շրջանեն հայեր էին անոնք, առևտրական սերտ կապերով կապված ջենովացիներու հետ:

Ծթե հայերը կրցեր էին «Մուլային Հայաստան» («Armenia Maritima») մը ստեղծել Ղրիմի մեջ, ջենովացիներու հետ իրենց ունեցած կապերուն շնորհիվ¹⁴, ու Ղրիմը կապել աշխարհի բաղամթիվ նավահանգիստներուն հետ, զարմանալի պիտի չվի, որ անոնք Բյուզանդիոնի դիմաց ստեղծեին կայք մը:

Այսպես ուրեմն, երբ Բյուզանդիոնի հանդիպակաց Գալաթան ջենովացիներու իշխանության տակ կանցներ 1303-ին, հայ տարրը, որ վաղուց կար Բյուզանդիոնի մեջ, ջենովացիներեն իսկ քաջալերություն գտնելով, եկավ կեդրոնանալ այդ թաղը, երբ մասնավոր ջենովացիք, Հովհաննես Կանտակուզեն կայսեր հաղթելով 1352-ին, սկսան ավելի ևս ամրանալ հոն, տարածվելով մինչև Բերա:

Հայերը կրոնական ազատություն պետք է վայելած ըլլան ջենովական թաղին մեջ, ինչ որ չունեին բուն Բյուզանդիոնեն ներս: Այլապես չի բացատրվիր անոնց ստեղծած հոգևոր

¹⁴ Տե՛ս իմ երկը՝ «Armenia Maritima», Բուրբո, 1943:

կյանքը Ս. Սարգիս անուն եկեղեցիի մը շուրջն այդ թաղին մեջ ԺԴ դարու կեսերեն հետո, երբ նույնիսկ ձեռագիրներ կընդունակվին հոն 1360—1361 տարիներուն¹⁵:

Հայ տարրը տակավ ստվարացավ Բյուզանդիոնի ջենովական թաղին մեջ, իրեն կորուննալով Կաֆային եկողները: Կաֆայի ուրիշ քաղաքներու հայոց նյութական ձեռնարկումը էր, որ 1389-ին «եղև սկիզբ շինության Սրբոյ Լուսատուրին ի Ղալաթի» որ յանուն Սուրբ Գրիգոր Հայոց Մեծաց Հայրապետի», և զոր Պոլսո թուրքերու կողմէն գրավում են քիչ առաջ, 1436-ին, պիտի վերջինեին Ղալաթիո հայերը:

Հայերու ուրիշ հոսանք մը Ղրիմեն Ղալաթիա հասած պետք է ըլլա 1391-ին, երբ թթարները եկան տիրել թերակղզիին: Թվակ տվյալներ մեզ կապախին այդ մասին:

Իսկական գաղութ սակայն Պոլսո գրավման հետ է, որ պիտի կազմվեր սուլթաններու նոր մայրաքաղաքի մեջ:

Թե ի՞նչ դավանանքի կպատկանեին Գալաթայի հայերը՝ մեկն է այն դժբախտ հարցունքն, որուն պատեն-ատեն վեճ կըրգոնն հայ կաթոլիկ բանասերներու միջև, զոր պատմական բնույթ կրող խնդիրներու անգամ դավանական կիրքեր հրահրելով:

Բնական էր, որ կաթոլիկներ ալ գտնվեին Ղալաթիո հայ գաղութին մեջ, ինչպես կային Ղրիմ, ուրկե եկեր էին Ղալաթիո հայեր: Բայց այդ պարագան շնթադրեր բնույթ ուր կաթոլիկ էր ամբողջ հայայնքը, մանավանդ երբ, ինչպես պիտի տեսնենք, հայկական էին անոր կառուցած եկեղեցիները և եպիսկոպոսներ կուգային զայն հովվել:

3. ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆԻ ՄԵՋ ՀԻՆ ՀԱՅ ԱՂՈԹԱՏԵՂԻՆԵՐ

Երկրորդ խնդիրը, որ Պոլսո հայ գաղութային կառույցները շահագրգռած այն հարցն է, թե երբ է հիմնված առաջին եկեղեցին Պոլսո մեջ: Այդ պարագան անհավաստի ունի անոր համար, որ կրթացատրեն նաև հայ տարրին գետնուման հազարվանները քաղաքի մը մեջ, որ մայրաքաղաքն էր և հաջորդական կայսրությանց:

Միջալի Ասորի պատմիչը ակնարկություն մը ունի Պոլսո մեջ հայ եկեղեցվո մը անդրբույն գոյություն: «Մինչև Ալեքսիս Ա կայսր օրերը (1081—1118) մեր (=ասորիոց) առև հայոց ազգը մեյմեկ եկեղեցի ունեին Պոլսո մեջ, և յուրաքանչյուր եկեղեցվո կային քահանա մը, աշխարհական վաճառականներու մարմին մը, և ուրիշներ»: Պա

¹⁵ Առջալ Ալպոյանյան, «Պատմություն հայ գաղութի», Ա, էջ 372:

Դիւր կալեցնեն, թե ասորի քահանայի մը շրջապատության վրա, թե Կ. Պոլսո ասորիները և հայերը թուրքերու հետ հարաբերութիւն կընեն, կայսրը բարկացաւ, և անոր հրամանով այրեցին երկու եկեղեցիները, արտաքսեցին երկու քահանաները, իսկ ժողովուրդին մնացածը մեծ մասամբ հերետիկոս եղան»¹⁶։

Բարգեն եպիսկոպոս, արտապելէ հետո այս մեջբերումը, կալեցնեն, թե Ալեքսիս Ա-ի հրամանով կամ մոլեռանդութիւնով հրդեհված եկեղեցին—հավանաբար փայտաշէն շինված մը—գոյութիւն ունիւր թ—ժ դարերուն միջև, եթէ ոչ ավելի կանուխ»¹⁷։

Հետո աղբյուրները կ'ունեն հայ աղոթատեղիներու գոյութիւն մասին բյուզանդական մայրաքաղաքին մեջ։ Տարտամ ակնարկութիւններ, որոնց երբեմն երբեմն կ'հանդիպինք, հոռու են կովան դառնալի մեզի։

Ինճիկյան, օրինակ, կ'ըրէ. «Իսկ առ ժամանակօք տէրութեան Յունաց՝ յիշատակի ի Կոստանդնուպօլս լիակ մենաստան, Հալոց անուամբ, յունարէն Սամէնիաօն, յորում կ'ենարգել զՓոտիոս. յիշեն զայս մենաստան Ջոնար, Սկիլիծիս, անանուն հեղինակն Քօմպէֆիդիան, և կ'են զրոմատիկ, այլ պատճառ անուանակոչութեան ոչ ոք ղնէ. կարծէ Տիւքանժ՝ թէ սակս բնակութեան հալոց կրօնաւորաց ի նմա՝ ի սկզբան անդ, կոչեցաւ այսպէս»¹⁸։

Հարկանցի այս նոթերը որեւէ փաստի չեն տանիր մեզ, և ավելի նոր օրերու պետք է գալ փաստեր գտնելու համար։

Առաջին հայ եկեղեցին, որ կ'հիշատակվի ավելի ստուգապես, գոյութիւն ունեցած է Բյուզանդիոնի հանդիպակաց ափին վրա, Ղալաթիո մեջ։ Այդ մասին մեզ հասած տեղեկութիւնները արդեն դուրս կ'ելլեն ենթադրութեանց սահմաննէ։

Հայերեն ձեռագիրներու հիշատակարանները, որոնք այնքան վճռական փաստեր մեզ տված են և կուտան մեր պատմութեան ամենն մօտայլ ու շփոթ դարերուն մասին, մեզ օգնութեան կ'հասնին հոս ալ։

Գաղատիո Կարմիր վանուց ձեռագիրներուն մեջ, ըստ Բարգեն կաթողիկոսի ցուցակին, «Քերականութիւն և մեկնութիւն քերականի Նսայեայ Նչեցույ և մեկնութիւն բառից Գաթի փիլիսոփայի» խորագրով ձեռագիր մը կա արդարեւ, որուն հիշատակարանը կ'ըսեն. «... Գրեցաւ ի թուիս Հայոց ՊԺ (1361) ի Կոստանդնուպօլս ի մօտ ի Ղալադան ընդ

հովանեա Սուրբ Սարգսի ի հանդիպումն ճանապարհի մեզ յնրոսաղէմայ ի Ղրիմն։ Քրիստոս Աստուած... երկնից արքայութեան արժանի առնէ զօրինակիս գորդն զԿիրիոն վարդապետն և զաշակերտն նորին Սեթ վարդապետն և զեղբայրն Աւետիս... և զմեզ զժողոս Ստեփաննոս անարուեստ և փժուս գրչի մեղաց թողութիւն պարզեցացի»¹⁹։

Ս. Սարգիս անվամբ եկեղեցւոյ մը նախնադույն գոյութիւնը կ'հաստատուի նաև ուրիշ հիշատակարանով մը, որ կ'գտնվի Վիեննայի Միխիթարյանց մոտ պահված ուրիշ ձեռագրի մը մեջ. «Արգ եղև զրա գրութեան սորա ի յաշխարհ Յունաց ի քաղաքիս Կոստանդնուպօլս, ընդ հովանեա Ս. Սարգսի, ձեռամբ Աստուածատուր արեղայի, ի թվականիս ՊԺ (1360)»²⁰։

Ս. Սարգիս եկեղեցիին մասին եղած հիշատակութեան ակնարկելով Օրմանյան կ'ըսեն, թե «Ս. Սարգիս անունը վստահութիւն կ'ենընչէ, թե հունական եկեղեցի մը չէ. հիշված տարին (1360) կ'իյնա այն շրջանին, երբ հայերը ավելի լատիններուն վրա կ'կոթնեին, և հույներ հայերը իրենց մոտեցնելու ջանքեր կ'ընեին»։ Բայց կալեցնեն, «թե այդ Ս. Սարգիս եկեղեցին ուրիշ կ'ըլմեն ծանոթ չէ, և տեղն ալ ճշտել դժվար է»²¹։

Այնուամենայնիվ որոշ է սակայն, որ Ս. Սարգիս եկեղեցին կ'գտնուի Ղալաթիո մեջ, ջննդական թաղը, բայց հավանական չէ, որ անոր հողին վրա իսկ կառուցված ըլլա հետագային Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, քանի որ, ինչպես այս վերջին եկեղեցւոյ մասին մեզ հասած հիշատակարանը կ'ըսեն, անոր հողը ի նորո զնվեցաւ Կոմս կամ Կոզմա անուն զրիմցի հայու մը կողմէ։

Կոստանդնուպօլսոյ ամենահին հայ եկեղեցին, որ մեզ ծանոթ է ավելի ևս անվիճելի կերպով, Ղալաթիո Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է։ Ան կառուցված է Պոլսո առումն առաջ, երբ Ղալաթիա ջննդական թաղ մըն էր բուն Բյուզանդիոնի դիմացը, և ուր հայ տարր մը գոյութիւն ունիւր վաղուց, իբրև ենթազաղութի Ղրիմի հայ զաղութին։

Նրկար ատեն այն կարծիքը կտիրեր, թե Ղալաթիո հայ եկեղեցին կառուցված է Պոլսո առումն 18 տարի առաջ միայն, այսինքն 1435—1436-ին, Կոմս կամ Կոզմա անուն կաթաղի հայ վաճառականի մը կողմէ, նախապես ջննդացիներեն զնված հողի մը վրա։ Արդարեւ, Ղալաթիո Ս. Գրիգոր Լուսավորչի մուտքին վերն փորագրված արձանագրութիւնը սապես կսկսի. «Ի սկզբան կառուցաւ

¹⁶ „Chronique de Michel le Syrien...“ p. 189.

¹⁷ Բարգեն եպիսկոպոս, հիշված աշխատութիւնը, էջ 294։

¹⁸ Հ. Դուկա Ինքիյան, «Աշխարհագրութիւն լորից մասանց աշխարհի, Նվրոպա», Ե, 1804, Վենետիկ, էջ 134։

¹⁹ Դուկա. Վ. Բարգումյան, «Երեմիա Չեկպի», Բ, էջ 484։

²⁰ Հ. Հ. Տաշյան, «Մայր Յուդակ», էջ 782։

²¹ «Ազգայատում», Բ, էջ 2149։

սուրբ տաճարս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ ի հայրապետութեան Հայոց Տեառն Թէոդորոսի Սրբազան Կաթողիկոսի և ի պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Յսայիայ արքեպիսկոպոսի առաջնոյ՝ զենալ տեղիս սրբոյ տաճարին ի ճէնովացոյ Կոմս անուն բարեպաշտ վաճառականի ուրումն Քէֆէ քաղաքին Ղըրոմու, յամի Տեառն 1436»:

Երեմիա Զեկեպի Քյոմյուրճյան իր «Ստամպոյայ Պատմութիւն» աշխատութեան մեջ ակնարկելով Ղալսթիւ Ս. Լուսավորիչ եկեղեցւոյ շինութեան, կըսե.

«Զսա շինեն կաֆայեցի՝
պագիրկեանքն յանուն նախնական,
... թիւն ութն հարիւր ութսուն հինգ (1436)՝
ընդ Յունաց տիրապետութեան»:

Երեմիա Զեկեպին վերլուծողներն ոմանք ենթադրած են, թէ «յանուն նախնական» բացատրութեամբ Երեմիա ուզած է ցույց տալ, թէ եկեղեցին կառուցւած է նախապէս հոն գոյութիւն ունեցող Ս. Լուսավորիչ անվամբ հին եկեղեցւոյ մը տեղը: Բժիշկ Վ. Հ. Թորգոմյան ուրիշ օրինակի մը վրային կողովեալ յայդ բառերը «յանուն նախնական», որով Երեմիա պետք է ուզած ըլլա նշել Ղըրմի հայ գաղութին ծագումը Անիին:

Իսկ ըստ Ինճիճյանի, «Ի Ղալսթիւ» մի եկեղեցի է հայոց, զոր նախ առաջին շինեաց Կոմս անուն վաճառական ոմն, որոյ եկեալ ի Քէֆէ քաղաքէն Գրըմու ի Ստամպոյ ի 1391, ի կաթողիկոսութեան Տեառն Թէոդորոսի, էառ տեղի ի ճէնովացոց Ղալսդա քաղաքի, և անդ ի թուականիս ՊՁԵ (1436) կառուց զայս եկեղեցի յանուն Սրբոյ Լուսաւորչի. իսկ դարբին ոմն Աւետ անուն կառուց զսեղան սրբոյ խաչին որ առ նովա...»²²:

Պալաթի Սարգիս դպիր ևս իր ձեռագիր տեղագրութեան մեջ կըսե. «Ըն անդ ի Ղալսթիւ» եկեղեցին հայոց յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին: Զոր ստացեալ է ազգ մեր ի թուականին Հայոց ՊՁԵ, և յամի Տեառն 1436:

Եւ շինեալ զսա Կոմս անուն հայ իշխան ոմն, եկեալ Կաֆա քաղաքէ ցամաքակղզոյն Գրըմու, յորժամ էր քաղաքն Ղալստա ընդ իշխանութեամբ ճէնովացոց:

Զորոյ զմատուռն՝ որ յանուն սրբոյ խաչին շինեալ է դարբին ոմն Աւետ անուն: Եւ այս պատահեաց յայնմ ժամանակի մինչդեռ Կոստանդինուպոլիս էր ի ձեռս Յունաց՝ ուստի առանց ամօք քան զառոման նորին ի տաճկաց...»:

Հովնան Գ-Փալազաշյան Ղալսթիւ հայ եկեղեցւոյ մասին «Կոչնակ» շաբաթաթերթի

մեջ հրատարակւած հոդածաշարքի մը ընթացքին լույս ընծայեց եկեղեցւոյ մեջ ի գտած զոտր արձանագրութիւնները, և հիմնելով վերոյ նաև ցարդ երևան հանված պատմական հիշատակութիւններուն վրա, տարվեցաւ եզրակացնելու, թէ եկեղեցին կառուցւած 1391-ին, այսինքն հողին գնման իսկ տարին իսկ 1436 թվականը հավանաբար հիշատակարանին զետեղման թվականն է՝ եկեղեցւոյն ընդարձակման կամ վերաշինութեան առթիւ: Դիտել կուտայ ի միջի այլոց, թէ հիշատակարանին մեջ հիշված Թեոդորոս կաթողիկոսի և Երուսաղէմի Եսայի պատրիարք պաշտոնավարութեանց ժամանակը ևս կհամապատասխանէ 1391-ին և ոչ թէ 1436-ին:

Հովնան Փալազաշյան եկեղեցւոյ մեջ կատարած իր պրպտումներու ընթացքին գտաւ եկեղեցւոյ հարավային պահարանին մէջ պահված մարմարայ ռուղանկյունի քարի մ վրա, դժբախտաբար մեկ անկյունը կտորուտեց Մեսրոպյան տառերով փորագրված արձանագրութիւն մը ևս, որուն առաջին կիսատողերուն և երկրորդ կիսատողերուն սկզբնատողերը կհորինեն «Ի Մեսրոպ դպրէ առացեալ բանս», իսկ վերջատողերը «Պարոն Բարսեղ» որ հավանաբար ճարտարապետն է:

Առ ի չգոյն թվականի, Փալազաշյան կառուցարկի իբր թվական արձանագրութեան վերջին տողին «պանծագեղ» բառը, որուն տառերուն համագումար արժեքն է 1350, թվական զոր կենթադրեն եկեղեցւոյ սկզբնական կառուցման տարին²³:

Կ. Հ. Բասմաշյան «Կոչնակ»-ի մեջ հրատարակեց այդ առթիւ հավելվածական քան մը տող «Հայոց հնագույն եկեղեցին Կ. Պոլս մեջ» խորագրին ներքե, և հաստատելով Պալազաշյանի լուծումը 1350 թվականի մասին կըսե, թէ «Պարոն Բարսեղի կողմէ կառուցված այդ եկեղեցին ևս սկզբնականը չէ, թան ևս երկրորդ կառուցում մըն է ավելի հիտաճարի մը ավերակներուն վրա, քանի որ տեսանք, թէ 1307-ին Հուսիկ մը կհիշվի Պոլիս, իբրև առաջնորդ, իսկ հայոց բնակարանները գիտենք թէ հաստատված էին հոծովեզերայ վայրեր, մասնավորապէս Ղալսթիւ, բլուզանդական կամ թէ զենովական պարիսպներուն կից»:

Ղալսթիւ հայ եկեղեցւոյ շինութեան թվականին ճշտման համար հիմնական փաստաթղթային եկեղեցւոյ օրհնութեան գիրն է, որ 1389-ին կնշանակե զայն, ըսելով. «Ի հայրապետութեան Տեառն Թէոդորոսի և երեսփոխանութեան Տէր Յովհաննէսի արքեպիսկոպոսի ամենայն Ռուսաց և Վլախաց աշխարհեղև սկիզբն շինութեան Ս. Լուսաւորչին

²² Հ. Լուկաս Ինճիճյան, հիշված աշխատութիւնը, էջ 134:

²³ «Կոչնակ», էջ 1052:

Ղալաթիա²⁴ 1389-ին սկսած, կրնա 1391-ին ալ ավարտած ըլլալ շինութիւնը:

Եւ ահա միեւնոյն դժնդակ հարցը կցցվի մեր դեմ, ավելի ճիշտը մեր դեմ կցցեն հայ կաթողիկոսները: Ի՞նչ դավանանքի կապականեր Ղալաթիո հայ եկեղեցին:

2. Գրիգորիս Գալեմբարյան, որ իր պատմական հետազոտութեանց խառնած է միշտ դավանական նեղմտութիւնը, կըսն առանց ասկալի. «Բնչպես Քեֆիի հոլներ Ղալաթիո մեջ իրենց համար Ս. Աստվածածին եկեղեցին շինած էին, նույնպես Քեֆիի կաթողիկէ հայեր 1391-ին Ղալաթիո մեջ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին շինեցին, որ հետո 1436-ին վերաշինվեցաւ»:

Օրմանյան անիմաստ կգտնէ կաթողիկ եկեղեցի կարծել Ս. Լուսավորիչը, պարզապես անոր համար, որ կաֆայճցիներ էին զայն շինողները. «Շինողներուն կաֆայճցի ըլլալը բավական եղած է ոմանց համար հոռմեադավաններու հիմնարկութեան կարծել այն եկեղեցին, սակայն Կաֆայի ոչ ամբողջ հայաբնակութիւնը, այլ մի մասը միայն ունիտորներու հետեւած էր, և Կաֆայի մեջ ալ հայադավաններու եկեղեցիներ կային, գննվացվոց իշխանութեան ներքեւ»²⁵:

Անիմաստ կգտնէ նույնպես հիմնադրին Կողմոս անունէն հետեւցնել, թէ ան կաթողիկ մը միայն կրնար եղած ըլլալ, քանի որ այդ անունը անսովոր չէր հայոց համար»:

Եւ վերջապես Օրմանյան ինքն ալ իր կարգին կմղվի ենթադրելու, թէ Գալաթայի շինութեանը ավելի շահագրգռված էին հայաբնակայն եկեղեցի մը շինութիւնը քաջալերելու համար քան թէ կաթողիկ աղոթատեղիի մը. «Վերջապես գննվացիք, առևտրական մարդիկ, շահագրգռական քան կրոնական հարաբերութեանց հետամտող, կաշխատեին հայերը մոտեցնել իրենց շահին և իրենց օգտին: Հետեւաբար հայ եկեղեցիի մը շինութիւնը քաջալերելու, ավելի հայադավաններուն համար պետք էր, զի հոռմեադավանները լատիններուն եկեղեցիներովն ալ կրավականանային, մանավանդ թէ կնախադասեին ալ»²⁶:

Օրմանյան իր տեսակետին ի նպաստ փաստ մը կնկատեն նաև այն պարագան, որ Ղալաթիո եկեղեցի մը 1436-ի վերաշինութեան առին Պոլսո մեջ կհիշատակվին Սասլի և Հովհաննես Եպիսկոպոսները, որոնք հոռմեական չէին, զի միւսթեան կհրապարակին»:

Օրմանյան, հիշելով դարձաւ Երեմիա Զեպիլիի այն ակնարկութիւնը, թէ եկեղեցին

շինված է «ընդ Յունաց տիրապետութեան»²⁷ և հետագա հիշատակարանի մը այն տողը, թէ շինութիւնը կատարված է «ընդ իշխանութեամբ Յունաց հրաման տուեալ շինելոյ»²⁸, կեզրակացնէ, թէ «գննվացիներու միջամտութիւնը կամ հոռմեադավանութեան ենթադրութիւնը այս կողմէն ալ հիմ չի գտներ»²⁹:

Ղալաթիո Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի մը հիմնարկութեան օրհնութեան գիրը, որ հայտնվեցաւ հետագային, կուզար լուծելու այդ վեճը: Օրհնութեան այդ գիրը կըսն, թէ «ի հայրապետութեան Տեառն Թեոդորոսի և երեսփոխանութեան Տէր Յովհաննէսի արքեպիսկոպոսի ամենայն Ռուսաց և Վրասաց աշխարհի եղև սկիզբն շինութեան Ս. Լուսավորչին ի Ղալաթիա»³⁰:

Միամիտ չըլլանք կարծելու համար, որ այսքան դուրաւ կլուծվին նման վեճերը...

Ուղենք թէ շուրջնք, հայ գաղութ մը Բյուզանդիոսի մեջ պիտի թվագրենք առաջին հայ եկեղեցիներուն հետ, որոնք հիմնվեցան հոն, որովհետեւ, ինչպես ըսինք, եկեղեցիներու շուրջ է, որ դիմագրծ սկսած են ստանալ հայ գաղութները գրեթէ ամենուրեք, և առավելապես այն երկիրներուն մեջ, ուր կրոնական մոլեռանդութիւնը դուրսի կվերածվիր ազգային անհանդուրժողութեան:

Այժմ պարզ է, որ Պոլսո առումէն և հայոց Պատրիարքութեան հաստատումէն շատ առաջ հոգևոր հայ կեդրոն մը գոյութիւն ունի Պոլսո մեջ, տեսակ մը Եպիսկոպոսութիւն:

Հարկանցի և հաճախ շփոթ են մեր ունեցած տեղեկութիւններն այդ մասին: Որոշ չենք գիտեր մանավանդ, թէ ի՞նչ էին հայ հոգևորականներու իրավասութիւնները օրթոդոքս իշխանութեան մը ներքեւ և ի՞նչ էր անոնց դիրքը Հայ եկեղեցի մը նվիրապետութեան մեջ:

Առաջին տարրատմ տեղեկութիւնը, զոր ունինք, ժ դարեն է-Խաչիկ Արշարունի կաթողիկոսին մասին կըսվի, թէ փորձած է հայերու համար Եպիսկոպոսութիւն մը հաստատել բյուզանդական կայսրութեան սահմաններուն մեջ, և զատելով զանոնք օրթոդոքս հոգևորականներու կամայականութիւններէն:

Օրմանյան, հիմնվելով Ասողիկի տվյալներուն վրա, կգրն ինչի կաթողիկոսի համար, թէ հոգ տարաւ «պաշտպանել յուր Եկեղեցի մը հավատարիմ հավատացյալները, որոնք հոռմեական գաղառններու մեջ կգտնվեին, Հու-

²⁴ «Հանդես ամսօրյա», 1946, էջ 116:

²⁵ «Ազգապատում», Բ, էջ 2150:

²⁶ Անդ:

²⁷ Դովո. Վ. Քարգոմյան. «Երեմիա Զեպիլի Քրիստոսի Պատմութիւն», Ա, Վիեննա, 1913, էջ 74:

²⁸ Քարգոմյան վարդապետ Կյուսեմբյան, «Կոլոսո Հովհաննէս պատրիարք», Վիեննա, 1904, էջ 110:

²⁹ «Ազգապատում», Գ, էջ 2151:

³⁰ «Հանդես ամսօրյա», 1946, էջ 116:

նական Հայաստանի սահմաններին դուրս։ Հայ վիճակներու մեջ եղող եպիսկոպոսները երկրուն կացութիւն մը ունեին, երբեմն ընդ-դիմանալով և երբեմն համակերպելով, բայց ալիքի արտաքին կերպով, և ոչ երբեք հիմ-նապէս իրենց Եկեղեցին բաժնւելով։ Իսկ այդ վիճակներին դուրս օտար երկիրներու մեջ գտնվող գաղթականներ՝ հույն եպիսկոպոսներու պիտի հպատակին, և շուգելով ալ հունադավան կղերին ձեռքը պիտի մնային։ Ուստի խաչիկ անոնց համար հոգաց և ձեռ-նարկեց անոնց հովվելու համար ձեռնադրել եպիսկոպոսունս, որոնք հարկաւ իրենց ձեռ-քին տակ քահանաներ ալ ունեին և կշատ-ցըվելին ըստ պատշաճի³¹։

Խաչիկ կաթողիկոսի նույն այդ փորձին մա-սին խոսելով, Օրմանյան կրօն աշուր։ «Նա ոչ միայն կրցավ հաշտութիւն գոյացնել զանա-զան հայագգի Բաշավորութիւնց և իշխանու-թիւնց մեջ, այլև ուժգնակի պաշտպանեց Ազ-գային Եկեղեցւոյ դավանութիւն հետեւող հա-յերը, որ բյուզանդական գաղաւթներու մեջ կգտնվելին, և որոնց վրա բռնադատութիւն-ներ կգործադրվելին Հոսիական Եկեղեցւոյ գիր-կը մտնելու համար։ Խաչիկ եղավ, որ առաջին անգամ հայ եպիսկոպոսներ ձեռնադրեց հու-նական վիճակներու մեջ գտնվող հայադավան հավատացյալներու համար։ Մինչև այն ա-տեն, յուրաքանչյուր վիճակի մեջ մեկն ալիքի եպիսկոպոսներ չէր գտնվեր, Եկեղեցւոյ հու-նական կանոններուն համաձայն։ Իրոք ալ այդ միջոցին սկսելով կտեսնենք, որ միևնույն վիճակի մեջ տարբեր եպիսկոպոսներ կգրտ-նրվին ծեսերու և դավանութիւններու տարբե-րութիւնց համեմատ»³²։

Այնպէս որ զարմանալի թող չթլի, եթե բարձրաստիճան հայ հոգևորականներու ստեպ կհանդիպինք բյուզանդական կայսրու-թիւն սահմաններուն մեջ օ դարեն հետո, թեև որևէ փաստ չունինք, թե մնայուն հայ թեմ մը գոյութիւն ունեցած է այդ սահմաններին ներս, և այդ թեմին վրա եպիսկոպոսներ հա-շորդած են իրարու։

Այնուամենայնիւ հայ եպիսկոպոսներ հա-ճախ հիշատակված են Բյուզանդիոնի մեջ, թուրքերին գրավվելի շատ առաջ, ուրեմն դեռ Պատրիարքութիւն չհաստատված Պոլսո մեջ։ Այսպէս, Սիսի Ս. Սոփիա եկեղեցիին մեջ 1307 մարտ 19-ին գումարված ժողովին մաս-նակցողներու կարգին կհիշվի Հուսիկ ճեպիս-կոպոս Ստիւպուլայ հայոց»³³, ինչ որ նշանա-կալից պարագա մըն է այդ ափերուն վրա հայ

եկեղեցական կյանքի մը գոյութիւնը ապա-ցուցանող։ Հետաքրքրական է նաև այն պա-րագան, որ Հուսիկի հետ Սիսի ժողովին մաս-նակցած են Թեսաղոնիկեի Ծսայի և Կիւպրոս, Նիկիոյ եպիսկոպոսները, ինչ որ ցույց կու-տա, թե հայ գաղութներ կային արգեն ալ, շրջաններուն մեջ ևս և կազմակերպված էին իբրև եկեղեցական համայնքներ։

Բացի հիշյալ ժողովի արձանագրութենէն որուն ներքև կերևա Հուսիկ եպիսկոպոսի ա-նունը ևս, ուրիշ տվյալներ չունինք անո-մասին և ոչինչ գիտենք իր աննձավորութիւն և իր իրավասութիւն սահմաններուն վրա։ Ավելցնենք, թե «Յուսիկ»-ը բնագրին մե-կնեիր կայանա «Hesychios» ձևով և Ամառյալ կառաջարկե զայն «Սուքիաս» ուղղել³⁴։

Սիսի եպիսկոպոսներու կարգին «Յուսիկ ե-պիսկոպոս Ստիւպուլայ» հիշատակողն է Կղե-մես Գալանոս համբավոր միսիոնարը, որ իր լատիններէն երկասիրութիւն մեջ կհայ-տարարե, թե իր թիւած անունները բառ առ-բառ քաղած է ամենահին ցուցակն մը³⁵։ Տա-րակուսողներ կան սակայն հիշատակութիւն ճշգրտութիւն մասին, այն պատճառաբանու-թյամբ, թե «Ստամպուլ» բառը չէր կրնար գոր-ծածական եղած ըլլալ Պոլսո առումն առաջ օսմանցիներու կողմէ։

Օրմանյան, օրինակ, կփորձե առեղծվա-ծական անձ մը նկատել Կղեմես Գալանոսն և հետագային Չամչյանն հիշատակված այն Հուսիկը։ «Սոս ժողովականներուն կարգին առեղծվածական անձ մը եղած է Յուսիկ ե-պիսկոպոս Ստիւպուլայ (Գալանոս, էջ 459), զոր նորերէն շատեր համարձակորեն իբրև կոստանդնուպոլսո եպիսկոպոս իմացած են (Չամչյան, Գ, էջ 309), սակայն կոստանդնու-պոլսո եպիսկոպոս մը՝ յուր փառավոր կո-չումը աղավաղ անունի մը չէր փոխեր հարկաւ՝ և կոստանդնուպոլսոն ալ օս-մանյան սովթաններն գրավված չէր, որ Ստամպուլ անունը գործածական ըլլար։ Ուս-տի քանի որ անունի մը դիմաց կգտնվինք և կոստանդնուպոլսո մեջ հայ եպիսկոպոսու-թիւն Աթոռ մը գտնվիլն ալ՝ բնավ հավանա-կանութիւն չընծայեք, ոչինչ կարգելու ըսել՝ որ իսավրիո, կամ Փոքր Ասիո Ստամպուլի կամ Ատրիանուպոլի, կամ ուրիշ քաղաքի մը անունին չարաչար աղավաղումին դիմաց կգտնվինք»³⁶։

Օրմանյանի տեսութիւնը բնականաբար հեռու էր տրամաբանական ըլլալ և Բաբգեն

³¹ «Ազգապատում», Ա, էջ 1137—1138։


³² Օրմանյան, «Հայոց Եկեղեցի», 1911, էջ 72։

³³ Հ. Աղեքսանդր Պալեյան, «Պատմութիւն կաթողի-կե վարդապետութիւն ի հայս», Վիեննա, 1878, էջ 80, էջ 281։


³⁴ Հ. Ամառյան, «Հայոց անձնանունների բառա-րան», Գ, էջ 592։

³⁵ Կղեմես Գալանոս, «Միարանութիւն. Հայոց Եկե-ղեցւոյ ընդ մեծի Սուրբ Եկեղեցւոյ Հռոմայ», Հռոմ, 1690, էջ 459։

³⁶ «Ազգապատում», Բ, էջ 1786։



ՏԵՂԵՐԻ ՎԱՆՔԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾ 1312 ԹՎԱԿԱՆԻՆ



СВЯТАГО СЛАВНОГО ПРАВОСЛАВНАГО ЦРКВИ

եպիսկոպոս իրավունք ունի գրելու. «Բավական բռնազորակ է այսպիսի հերքում մը. վասնզի Ստամպոլ ձևը եթե երբեք ընդունվի իսկ իբրև թուրք առավարանություն, ասիկա չի կրնար հերքել պատմական իրողություն մը... Կղեմես որևէ դիտում կամ շահ չունի առեղծվածային անձ մը ստեղծելով Կ. Պոլսի հայոց առաջնորդական Աթոռին համար և աղավաղելով Կ. Պոլսի անունը: Ըստ իս հավաստի և պատմական է Հուսիկ եպիսկոպոսի մը գոյությունը, իբրև առաջնորդ Կոստանդնուպոլսո կամ Սփինյալում»³⁷:

Ինչպես ապացուցած ենք մեր մեկ հոդվածին մեջ³⁸, Իսթամպոլ կամ Իսթամպոլ տիտղոսը, զոր թուրքերը որդեգրեցին Բյուզանդիոնի փոխարեն, աղաքը աղավաղումն է հունարեն Սփինյալի ձևին, և սակայն ան ծանոթ էր Պոլսո գրավումին դարեր առաջ: Զայն գործածած է Մասուդի արաբ աշխարհագիրը Ժ դարուն, ինչպես և Տակութ պատմիչը ԺԴ դարուն: Անոր կհանդիպենք նաև Իբն-Աթիր, Արուս-Տիգա, Դիմիշլի, Իբն-Բադուա արաբ հեղինակներուն, ինչպես նաև արևմտյան հեղինակներու մոտ, որպիսին է Շիլլերերգեր³⁹:

Բառը հայ աղբյուրներու մեջ ևս գործածված է սկսյալ ԺԲ դարեն, երբ հորիզոնին վրա երևցած իսկ չէին դեռ թուրքերը: Ստամպոլ բառին կհանդիպինք, օրինակ, ԺԲ դարու ձեռագրի մը հիշատակարանին մեջ⁴⁰, ինչպես և ուրիշի մը մեջ, որ ԺԴ դարեն է⁴¹: ԺԵ դարուն ևս անոր կհանդիպինք հայերեն ձեռագիրներու մեջ, ինչպես Հայսմավուրքի մը մեջ, որ 1449-ին գրված է, Պոլսո առումին առաջ⁴²:

Այնպես որ Հուսիկ կամ Աճառյանի ուղղումով Սուբիաս, կհանդիսանա մեզի ծանոթ առաջին հայ եպիսկոպոսը Պոլսո մեջ:

1389-ին Պոլսի կգտնենք «Ռուսաց և Վլախաց աշխարհի արքեպիսկոպոս Հովհաննեսը, որ 138-ին իր Աթոռին վրա վերահաստատվելու հետո Թեոդորոս կաթողիկոսին, տարի մը հետո ներկա կըլլար Ղալաթիո Ս. Լուսավորիչ

եկեղեցվո հիմնարկներ»⁴³: Եկեղեցվո օրհնության գրին մեջ հիշատակված այն պարբերությունը, թե եկեղեցին հիմնված է «ի հայրապետության Տէր Թէոդորոս կաթողիկոսի և երեսփոխանության Տէր Յովհաննէսի արքեպիսկոպոսի ամենայն Ռուսաց և Վլախաց աշխարհի», ենթադրել կուտա, թե ան իր հոգևոր իրավասության տակ ունի Բյուզանդիայի հայերն ալ: «Կերևա թե Հովհաննես,— կգրեք արդարև Ակինյան,— կարգված է կաթողիկոսին կողմն երեսփոխան արևմտյան կողման, ոչ միայն Ռուսաց և Վլախաց աշխարհներու, այլև Բյուզանդիոնի հայ զաղթականություն»⁴⁴:

Հովհաննես եպիսկոպոսը, որուն կականակեց Ղալաթիո եկեղեցվո օրհնության գիրը և որ եկեղեցվո պատմության մեջ ծանոթ է Հովհաննես որդի Նասրեդդինի անունով, մեկն է այն առաջին հոգևորականներն, որոնք նրատած են կվովի արքեպիսկոպոսական Աթոռին վրա: Կվովի թեմը, նվիրագործված Մեսրոպ կաթողիկոսի 1364 հունվար 15-ի կոնդակով, իբր առաջին թեմակալ ունեցեր էր Գրիգոր անուն եպիսկոպոս մշ⁴⁵, որ սակայն դժգոհ թողուցեր էր Մայր Աթոռը. «Զի առանց ձեռնադրողին հրամանաց յայլոց վիճակ կու ձեռնարկէր և ամբարտաւանութեամբ կու զնայր»⁴⁶: Այնպես որ Կոստանդին կաթողիկոս, որ իր 1374 հունվար 15-ի կոնդակով հաստատեր էր զայն իր պաշտոնին վրա⁴⁷, ի վերջո հրաժարեցուցեր էր և կվովի թեմին համար 1380-ին եպիսկոպոս ձեռնադրեր էր «Յովհաննէս պր. Նասրատինի որդին», որ Սիս կգտնվեր այդ պահուն Վլասն եպիսկոպոսության ալլո վիճակի» և զայն ղրկեր էր կվով⁴⁸, թեև Գրիգոր գրաված կպահեր Աթոռը և չէր հպատակեր կաթողիկոսական հրամանին:

Հովհաննես կվով վերադարձին միասին է բերած «Ներսէս Լամբրոնացոյ Սեկնութիւն Սաղմոսաց», գրված 1301-ին, զոր կաթողիկոսը նվեր ըրած էր նորընծային և որուն հիշատակարանին մեջ կհիշվին հայրը՝ պարոն Նասրատին և մայրը՝ Նուրիճա խաթուն, եղբայրները՝ Ավագ կրոնավոր և Ավետիս քահանա⁴⁹:

Հաջորդ կաթողիկոսը Թեոդորոս ևս Հովհաննեսը կհաստատեր իր Աթոռին վրա 1388-ին⁵⁰, թեև գինաթափ չէր եղած դեռ իր

37 Բարգեն եպիսկոպոս, «Կ. Պոլսո Հայ Պատրիարքության ծագումը», «Հանդես ամսօրյա», 1924, էջ 437—438:

38 H. Dj. Siruni, «Nom de la ville de Constantinople dans les textes arméniens et turcs», «Studia et acta orientalia», III, 1961—1962, p. 171.

39 Աղբյուրները ցույց տրված են մեր հիշյալ հոդվածին մեջ:

40 Գաւեգին կաթողիկոս Հովսեփյան, «Հիշատակարանը ձեռագրաց», Ա, Անթիլիաս, 1951, էջ 419:

41 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 622:

42 Երևանի մատենադարանին թիվ 2379, 2748, 9004 ձեռագրերները, զորս կհիշե խաչիկյան համապատասխան տարիներու տակ:

43 «Հանդես ամսօրյա», 1946, էջ 116:

44 Հ. Ն. Ակինյան, «Հանդես ամսօրյա», 1947, էջ 309:

45 Հ. Ղ. Ալիշան, «Կամենից», էջ 5—6:

46 Անդ, էջ 9—13:

47 Անդ, էջ 215—216:

48 Անդ, էջ 217:

49 Հ. Ն. Ակինյան, «Հանդես ամսօրյա», 1947, էջ 302:

50 Հ. Ղ. Ալիշան, «Կամենից», էջ 9—13:

մրցակիցը, հակառակ պաշտոնանկ եղած և բանադրված ըլլալուն, և կմերժեք կաթողիկոսի զրկած նվիրակները, որոնցմե մեկը իբրև թե սպաննել էր տված ճանապարհին:

Հակոբ Գ կաթողիկոս, իր կարգին, իր 1409 թվականի կոնդակով Հովհաննես արքեպիսկոպոսը կվերահաստատե իր թեմին վրա, երբ ան Երուսաղեմ ուխտի գացած, Սիս հանդիպած էր իր թեմը դառնալի առաջ, ըսելով իր կոնդակին մեջ, թե ինչպես իր նախորդները, ռուս նախնի օրինակի նույնպես և մեք պարգևեցաք մեր բարձր հրամանով՝ և օրհնութեամբ գրովս՝ զլուին իւր բոլորովին երկրով՝ Տէր Յոհաննէսի ղատիմի սեփական թեմ և վիճակ, Աթոռ և հանգստեան տեղի, ի վերայ ան սահմանին զոր առաջին սուրբ և երջանիկ կաթողիկոսքն են հաստատել, որ ոչ ոք կարէ խորել ի Լովին երկրին թեմէն⁵¹:

Հովհաննէսի գործունեության մասին ուրիշ որևէ լուր չունինք, բացի կաթողիկոսական սուլն երեք կոնդակներու մեջ շոյալված գովեստներն: Թոշքա⁵² և Բժշկյան⁵³ թագավորական զարմե սերած՝ կնկատեն զայն:

Պոլսո առումեն առաջ հայ եպիսկոպոսի մը Պոլսո մեջ ներկայության մասին թանկագին վկայություն մը մեզ հայթայթեց ռումեն պատմագիր պրոֆ. Փ. Փ. Փանայիտեսկու, հրատարակության տպու առթիվ Մուղդավայի Ալեքսանդր-Չէլ-Բուն (Ալեքսանդր Բարի) իշխանին կողմեն 1401 թվականին տրված հրովարտակը Սուլովայի մեջ հայ եպիսկոպոսության մը հաստատման մասին: Այդ հրովարտակը իր կարևորությունն ունի ճշտելու համար ոչ միայն Ռումանիո հայ թեմին սկզբնավորությունը, այլ նաև Պոլսո մեջ այդ թվականներուն ներկայությունը բարձրաստիճան հայ հոգևորականներու:

Արդարև, այդ հրովարտակին համաձայն, Բյուզանդիոնեն է, որ հունաց Անտոն պատրիարքին հանձնարարությամբ, Մուղդավա կուգա և Ալեքսանդր-Չէլ-Բուն իշխանին կողմեն Սուլովայի և Մուղդավայի հայ եկեղեցիներուն կկարգվի 1401-ին Հովհաննես եպիսկոպոս մը:

Ալեքսանդր-Չէլ-Բունի հրովարտակը կըսե. «Շնորհիվն Աստուծո մենք, Ալեքսանդրու վոյվոդ⁵⁴, իշխան Մուղդավայի, իմ եղբոր Բոգդանի հետ⁵⁵ մեկտեղ կժանուցանենք մեր այս գրով բոլոր ընտիր հպատակներուն, որոնք պիտի տեսնեն այս գիրը կամ պիտի լսեն, թե

այս իրական հայ եպիսկոպոս Հովհաննեսը եկավ մեզ մոտ, Մուղդավական մեր աթոռը, և մեզ ներկայացուց իսկական նամակները Կոստանդնուպոլսո Անտոն Տիեզերական Պատրիարքին⁵⁶, — որովհետև իրենց հայ պատրիարքը⁵⁷ դեռ չենք ծանցած, — որպեսզի բարձրացվի սույն եպիսկոպոսության, աջակցությամբ մեր տիրոջ վիստրի⁵⁸: Նմանապես երգում ըրավ մեր իշխանության՝ ընդունիլ և հաստատել եկեղեցական ամեն կարգ-կանոն:

Հետևաբար, Հովհաննես հայ եպիսկոպոսին տվինք հայ եկեղեցիները և անոնց քահանաները: Ան մեր ամբողջ երկրին մեջ իրավասություն պիտի ունենա հայոց վրա եպիսկոպոսական իր իրավունքով: Անոր Աթոռը հաստատեցի Սուլովա, մեր մայրաքաղաքը: Հայերեն ան որ զայն կպատվեմ, մեզ պատված պիտի ըլլա Մուղդավայի մեր երկրին մեջ. ով որ պիտի չլսե անոր, պիտի պատժենք զայն անոր ձեռքովը:

Իմ հավատքս է այս, վերոհիշյալ Ալեքսանդրու վոյվոդիս, և հավատքն է իմ եղբոր Բոգդանիս և Մուղդավայի բոլոր բոյարներուն, մեծ ու պզտիկ:

Գրվեցավ Սուլովա, մեր կնիքին տակ, 6909 (1401) թվականին, հուլիս 30-ին, Բրաթեյի ձեռքով⁵⁹:

Հովհաննես եպիսկոպոսի Պոլսո հետ ունեցած կապին մասին ավելի լայն տեղեկություններ չունինք: Սա միայն ստույգ է, որ Անտոն պատրիարքի հանձնարարականը ստանալի շատ հոգն է, որ ներկայացած է Սուլովա, որովհետև Ալեքսանդր-Չէլ-Բուն երբ 1401-ին զայն առաջնորդ կկարգեր Մուղդավայի հայերուն, Անտոն մեռած էր վաղուց:

1403 թվականին Պոլսո առաջնորդ կհիշվի Զաքարիա արքեպիսկոպոս: Զեռագիր Ավետարանի մը հիշատակարանը, զոր Ալիշան կհրատարակե «Հայկարան»-ի մեջ, կըսե արդարև. «Ե թվ. ԹՄԲ (1403) ի պարոնութեան Ամիր-Աբդալին և ի հայրեպատույթեան Կոստանդնուպոլսո արհեպիսկոպոսի Տէր Զաքարիայի, ի գիւղն Մզունք, ընդ հովանեւ Սուրբ Առաքելոցն, առ ոտս Սուրբ Ստեփանոսի»:

Մեր տեղեկությունները Զաքարիայի մասին հակիրճ այս նոթեն անդին չեն անցնիր:

(Ծանոթակիլի)

⁵¹ Հ. Ղ. Ալիշան, «Կամենից», էջ 222:

⁵² Անդ, էջ 131:

⁵³ Բժշկյան, «Ճանապարհորդություն ի Լեհաստան», էջ 106:

⁵⁴ Ալեքսանդր-Չել-Բուն (Բարի), իշխան Մուղդավայի, 1400—1432:

⁵⁵ Բոգդան, եղբայր Ալեքսանդր-Չել-Բունի:

⁵⁶ Անտոն Դ, Կոստանդնուպոլսո Հունաց Պատրիարք, 1389—1390 և 1391—1397: Իր հանձնարարականը ուշ հասած պետք է ըլլա Ալեքսանդր-Չել-Բունին:

⁵⁷ Իմանալ կաթողիկոսը:

⁵⁸ Վիստրի, մեծ դուք Լիթվանիո, որ այն օրերուն կհովանավորեր Մուղդավան:

⁵⁹ P. P. Panaitescu, „Hrisovul lui Alexandru cel Bun“, Bucuresti, 1935, p. 4—5: